ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՏԴ 32+28.1

Նունե Մելքոնյան
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
melkonyanune@yahoo.com

Ժամանակակից քաղաքագիտության խնդիրն է ուսումնասիրել Արևմտյան Եվրոպայում մահմեդական համայնքների հնարավոր ինտեգրման խոչընդոտները և այս համատեքստում, ընդգծել նրանց ինստիտուցիոնալ կազմակերպությունների գործունեությունը: Հանրային քաղաքականության մեջ մահմեդական համայնքների դերի հիմնական գործիքներից են ինստիտուցիոնալացված կազմակերպությունները, որոնք հատկապես կարևոր են քաղաքական մասնակցության տեսանկյունից: Ֆրանսիայում կրոնական հարցերով զբաղվում են ազդեցիկ մահմեդական դաշնությունները, այդ թվում՝ Ֆրանսիայի իսլամական կազմակերպությունների միությունը: Գերմանիայում մահմեդական կազմակերպությունները գործում են պետական մակարդակով: Կան ավելի շատ տեղական կազմակերպություններ, որոնք հիմնված են պետական քաղաքացիական իրավունքի վրա: Մեծ Բրիտանիայում ամենաազդեցիկները մահմեդական ազգային հաստատություններն են, որոնց հովանու ներքո գործում են բազմաթիվ տեղական փոքր և միջին կազմակերպություններ: Ամենամեծ կազմակերպությունը 1997 թ. հիմնված Բրիտանական մահմեդական խորհուրդն է (MCB), որն ունի մոտ 500 մասնաճյուղ: 2005 թ. հիմնադրվեց Բրիտանական մահմեդականների ֆորումը, որը միավորում է հատկապես մեծ թվով պակիստանցի սուննիների, որոնք ունեն իրենց մզկիթներն ու ցանցերը՝ հատուկ բազաներ Անգլիայի հյուսիսում, կենտրոնական հատվածներում: Նիդեռլանդներում մուսուլմանները բազմաթիվ փորձեր են կատարել՝ ստեղծելու մեկ ներկայացուցչական մարմին բոլոր մուսուլմանների համար: Շատերը ձախողվել են սունի և շիական ահմադիյա մուսուլմանների միջև ներքին աղանդավորական տարաձայնությունների պատճառով, և իշխանությունները հրաժարվել են համագործակցել այդ խմբերի առանձին միավորումների հետ՝ ասելով, որ նրանք պատշաճ կերպով չեն ներկայացնում մահմեդական բնակչությանը՝ որպես ամբողջություն: Բելգիայի մահմեդական ազգային խորհուրդը 1998 թվականից հանդիսանում է հիմնական ներկայացուցչական մարմինը (ԵՄԲ): Որոշակի պայքար է ընթանում կրոնական դավանանքների ներկայացուցիչների թվի համար: Ի լրումն իսլամական հավատքի պաշտոնական մարմնի՝ ԻՕ-ի, տարբեր էթնիկ սոցիալ-մշակութային ասոցիացիաներ և միություններ ձևավորում են շատ դինամիկ մահմեդական քաղաքացիական հասարակություն:

Բանալի բառեր՝ *Արևմտյան Եվրոպա, մուսուլմանական համայնքներ, իսլամ,*

---

* Հոդվածը ներկայացվել է 21.01.2022:
Տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը 27.01.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 27.01.2022:

ինստիտուցիոնալացված կազմակերպություններ, կրոնական միություններ:

Ներածություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ԵՄ անդամ պետություններում 1990-ականների սկզբից ի հայտ եկած հակամարտություններով և միգրացիայի հետ կապված անվտանգության ու կայունության վերաբերյալ մտահոգություններով: Այս մտահոգությունները ստիպեցին, որ փոքրամասնությունների և միգրանտների խնդիրներն առաջնահերթ դառնան ԵՄ անդամ պետությունների և ԵՄ-ի քաղաքականության օրակարգում: Այսօր ընդլայնված ԵՄ-ում արևելք-արևմուտք միգրացիայի հեռանկարը և փոքրամասնությունների ինտեգրման ձախողման ու ահաբեկչության հետ կապված մտահոգություններն ավելի են ընդգծել այս հարցերի քաղաքական ակնհայտությունը: Կրոնա-էթնիկական փոքրամասնությունների խնդիրները, եվրոպական անվտանգության և իրավունքների վրա հիմնված քաղաքական մոտեցումների համատեղելիությունը, էլիտաների ու հասարակության կարծիքի դերը, վերազգային քաղաքականության ձևավորման ազդեցությունը կարևոր նշանակություն ունեն քաղաքական իմաստով այս լարված միջավայրում միգրանտների և փոքրամասնությունների հետ կապված քաղաքական մարտահրավերների ավելի լավ ընկալման համար: Քաղաքական գիտությունների առջև խնդիր է դրված հետազոտել հատկապես Եվրոպայի մուսուլմանական համայնքների հնարավոր ինտեգրման խոչընդոտները և այս համատեքստում նրանց ինստիտուցիոնալացված կազմակերպությունների գործունեության լուսաբանումը: Պետական հանրային քաղաքականության տիրույթում մուսուլմանական համայնքների դերակատարման հիմնական գործիքներից մեկը ինստիտուցիոնալացված կազմակերպություններն են, որոնք կարևոր են հատկապես՝ քաղաքական մասնակցության առումով:

Հետազոտություն

Ֆրանսիայում *կրոնական գործերում ներգրավված են ազդեցիկ մուսուլմանական ֆեդերացիաներ, որոնցից է* ***Ֆրանսիայի իսլամական կազմակերպությունների միությունը****:[1] Այն իր գործունեության հիմքում դրել է մուսուլմանական եղբայրության գաղափարները և փորձում է խթանել ինչպես պահպանողական, այնպես էլ պրագմատիկ իսլամը, որը հարմարեցված է արևմտյան և աշխարհիկացված հասարակություններին: Այս ֆեդերացիայի հետ կապված են մոտ երկու հարյուր մուսուլմանական միավորումներ, ոչ միայն պաշտամունքային վայրերը ղեկավարող կրոնական միություններ, այլև՝ մշակութային միություններ, ուսանողների և կանանց կազմակերպություններ: Մյուսը* ***Փարիզի մզկիթի մուսուլմանական ինստիտուտն*** *է[2], որը ներկայացնում է ալժիրյան ծագմամբ ավանդական սուննիներին: Այս կառույցը պաշտոնապես աջակցում է այսպես կոչված «չափավոր և հանրապետական իսլամին»:* ***Ֆրանսիայի մուսուլմանների ասամբլեա[3]*** *անունն է կրում մարոկկացիների կազմակերպությունը: Թուրքերն ունեն իրենց առանձին մուսուլմանական ֆեդերացիաները, մեծ ու փոքր խմբավորումները: Փոքր կազմակերպությունները կապված են կոնկրետ էթնիկ փոքրամասնությունների*

[1] www.uoif-online.com

[2] www.mosque-de-paris.org

[3] www.lermf.com

հետ: Կրոնական հարցերում ներգրավված այս կազմակերպությունների կողքին կան նաև մի քանի միավորումներ, որտեղ ընդգրկված են ավելի շատ հասարակական գործերով հետաքրքրված աշխարհիկ մուսուլմաններ: Իսլամական ֆունդամենտալիզմը հերքելով՝ այս կազմակերպությունները փորձում են քաղաքական այլընտրանք լինել կրոնական արմատականության համար: Նրանք գործում են այնպես, ինչպես բուն ֆրանսիացիները՝ իրենց կոչելով ճիշտ և ժամանակակից մուսուլմաններ: Այս հատվածը ձգտում է խորապես աշխարհիկացված առօրյա կյանքով դառնալ լիարժեք ֆրանսիացի, միաժամանակ մնալով մուսուլման: 2007 թ.-ին է հիմնադրվել ***Ֆրանսիայի շիաների դաշնությունը****,[1] որը աջակցում է երկրի շիաներին, զբաղվում է Թեհրանի և Դամասկոսի ռեժիմների պաշտպանությամբ: 2011 թվականին հայտնվեց նոր մուսուլմանական միավորում՝* ***Fils de France անունով (Ֆրանսիայի որդիներ)[2]:*** *Այս ասոցիացիան մտադիր է խթանել Ֆրանսիայի մուսուլմանների մեջ ֆրանսիական հայրենասիրական ոգու հաստատմանը և ներգաղթը խթանելու փոխարեն՝ պաշտպանում է իսլամի մշակույթը ֆրանսիական ձևով վերափոխելու մի նախագիծ՝ միաժամանակ Ֆրանսիայի պատմությունը բացելով իսլամի իրականության առջև: Մուսուլմանական կազմակերպությունների խողովակներով ներկայացուցիչներ են ընդգրկվում նաև պետական կառույցներում: Ֆրանսիայի բանակում, բանտերում և հիվանդանոցներում 2005-06 թթ.-ից պետությունը նշանակում է հոգևորականների հավատացյալ մուսուլմանների կրոնական սպասարկման համար:*

Գերմանիայում *մուսուլմանական կազմակերպությունները գործում են և՝ համապետական՝ դաշնային, և՝ հողերի՝ նահանգային մակարդակներում: Առավել շատ են տեղական կազմակերպությունները, որոնք ստեղծվում են պետության քաղաքացիական օրենսդրության հիման վրա: Դաշնային մակարդակում գործող գլխավոր կազմակերպությունները[3][6] հովանավորում են տեղական կազմակերպություններին: Գործում են նաև համակարգող խորհուրդներ, սակայն ընդհանուր առմամբ այս կազմակերպություններն ամենևին էլ միասնական չեն իրենց շահերի ու նպատակների հարցում: Երբեմն պետության հետ համագործակցությունը չի ստացվում, որոշ հողերում նրանք չեն ճանաչվում և կան նաև արգելված կառույցներ: Գերմանիայում մուսուլմանական կազմակերպությունների միջև առավել սուր է զգացվում տարբեր կրոնական ուղղությունների և էթնիկական պատկանելիության հիմքով հակասությունները: Գերմանիայում առաջին անգամ բացահայտ մուսուլմանական քաղաքական կուսակցությունը (Muslimisch Demokratische Union, Ժողովրդավարական մուսուլմանական միություն) մասնակցել է քաղաքային ընտրություններին 2011թ. սեպտեմբերին՝ Օգնաբրուկում, սակայն չի կարողացել տեղեր ստանալ քաղաքային խորհրդում[7]: Հողային կառավարությունների և կրոնական համայնքների միջև քննարկումները մուսուլմանական կազ-*

[1] www.centre-zahra.com

[2] www.filsdefrance.fr

[3]Դրանցից են գերմանաբնակ թուրքերի DITIB (Diyanet Işleri Tьrk İslam Birliği) կազմակերպությունը, Իսլամական մշակութային կենտրոնների միությունը՝ VIKZ (Verband der Islamischen Kulturzentren), Գերմանիայի Դաշնային Հանրապետության իսլամական խորհուրդը (Islamrat für die Bundesrepublik Deutschland Islamic) և Գերմանիայում մուսուլմանների կենտրոնական խորհուրդը (Zentralrat der Muslime in Deutschland ZMD): info@ditib.de, www.vikz.de, www.zentralrat.de, www.islamrat.de

մակերպությունների ներկայացուցիչներին պետական մարմիններում ներգրավելու համար մեր հետազոտության ժամանակագրական հատվածում փաստեր չենք գտել: Որոշ առաջընթաց եղել է միայն հիվանդանոցների և բանտերի հարցում:

Մեծ Բրիտանիայում *առավել ազդեցիկ են համապետական մուսուլմանական կառույցները, որոնց հովանու տակ գործում են բազմաթիվ մանր ու միջակ տեղական կազմակերպություններ: Ամենամեծ կազմակերպությունը 1997 թ. հիմնադրված* ***Բրիտանիայի մուսուլմանական խորհուրդն*** *է (MCB), որն ունի մոտ 500 հարակից կազմակերպություն[1]: Այս կառույցի հետ սերտորեն կապված էին Շոտլանդիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի մուսուլմանական խորհուրդները: Սկզբում ՄԹ լեյբորիստական կառավարությունը դրականորեն էր տրամադրված և դեմ չէր զարգացնելու համագործակցությունը Բրիտանիայի մուսուլմանական խորհրդի հետ, սակայն անգլիացիների ակտիվ մասնակցությունն ահաբեկչության դեմ պատերազմին Իրաքում և այլուր, սառեցրեց այդ գործընթացը: Խորհուրդը վարում էր շատ ակտիվ հակապատերազմական գործունեություն, իսկ լրատվամիջոցներն ու հետազոտական կենտրոնները փաստեր էին հրապարակում իսլամիստ արմատականների հետ ունեցած կապերի մասին:[2] 2005 թ. հիմնադրվել է* ***Բրիտանիայի մուսուլմանական ֆորումը****, որը միավորում է հատկապես պակիստանցի մեծ թվով սուննիների, ունի իր մզկիթներն ու ցանցերը և կոնկրետ հենակետեր Անգլիայի հյուսիսում և կենտրոնական հատվածներում: Գործում էին նաև* ***Սուֆիստական մուսուլմանների խորհուրդը****,* ***Քիլիամ հիմնադրամը****, 2009 թ. հիմնադրված* ***Մզկիթների և իմամների ազգային խորհուրդը****,* ***Մուսուլմանական ինստիտուտը,*** *որը հիմնադրվել է դեռևս 1970-ական թվականներին, վերածնունդ է ապրել և ունի նորացված օրակարգ 2009-ի դեկտեմբերից: Համազգային մակարդակում գործող այլ կարևոր կազմակերպություններից են լավագույն ռեսուրսներ ունեցող մի շարք բարեգործական կազմակերպություններ, որոնք երբեմն ավելի ազդեցիկ են:*

Պետական-քաղաքական ոլորտում մուսուլմանների ընդգրկվածության չափը այդքան էլ մեծ չէ, սակայն տպավորիչն այն է, որ պառլամենտում և մունիցիպալ մարմիններում լեյբորիստներն ու պահպանողականներն իսլամադավան ներկայացուցիչներ ունեն, շատ են նաև հեռավոր արմատներ ունեցող պետական ծառայողները:

Նիդեռլանդներում *բոլոր մուսուլմանների համար միասնական ներկայացուցչական մարմին ստեղծելու բազմաթիվ փորձեր են կատարվել ինչպես մուսուլմանների, այնպես էլ ոչ մուսուլման մեծամասնության կողմից: Դրանց մեծ մասը ձախողվել է սուննի, շիա և ահմադիյա կոչվող ուղղության մուսուլմանների միջև ներքին կրոնական տարբերությունների պատճառով, իսկ իշխանությունները հրաժարվել են համագործակցել այդ խմբավորումներից ի հայտ եկած առանձին ասոցիացիաների հետ՝ հայտարարելով, որ դրանք բավարար չափով չեն ներկայացնում ընդհանուր իսլամադավան բնակչությանը: 1990-կան թթ. և հետո այս կազմակերպությունները մեկ հովանու ներքո միավորվելու հարցում հոլանդական պետության ճնշումը մեծացավ: Նախ ստեղծվեց Մուսուլմանական կոնտակտային գործակալությունը (Contact Moslims Overheid, CMO, www.cmoweb.nl): CMO-ն միավորում է հինգ թուրքական կազմակեր-*

[1] Բրիտանիայի մուսուլմանական խորհրդի մասին տվյալները վերցված են www.mcb.org.uk պաշտոնական կայքից

[2] Phillips, Richard "Standing together: the Muslim Association of Britain and the anti-war Movement", Race & Class, vol. 50, no. 2 (2008), pp. 101-113

պություններ և ներառում է նաև Նիդեռլանդներում Մարոկկոյի մզկիթների կազմակերպությունների միությունը և Շիաների միությունը, որում հիմնականում իրաքյան շիաներ են: Հետագայում ստեղծվել են ևս երկու համակարգող կառույցներ: Նրանք գործում էին որպես ներկայացուցչական մարմիններ և մասնակցում են Հոլանդիայի ինտեգրման և ներգաղթի նախարարի հետ կանոնավոր հանդիպումների, որտեղ Նիդեռլանդների կառավարությունը խորհրդակցում է նրանց հետ և տեղեկություններ տարածում: Դրանք կարևոր դեր են ունեցել մուսուլմանների ու հոլանդական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեղական ու ազգային իշխանությունների միջև երկխոսության հաստատման գործում: Կան մի շարք այլ ազգային կազմակերպություններ, այդ թվում՝ ***Իսլամական կանանց ցանցը*** *(Landelijk Islamitisch vrouwennetwork, LIVN, www.livn.nl), որն ակտիվ գործունեություն է ծավալում կանանց միջկրոնական երկխոսության և ազատագրման/էմանսիպացիայի ուղղությամբ: Հաագայում կա մեկ իսլամական կուսակցություն՝ Իսլամ-դեմոկրատներ անունով (Islam-Democraten, www.islamdemocraten.nl): Այն մեկ տեղ ունի քաղաքապետարանում:*

Բելգիայում *1998 թվականից մուսուլմանների համապետական կառույցը Գլխավոր ներկայացուցչական մարմինն է (EMB): Նրա գործունեության շուրջ առկա են ներհամայնքային տարաձայնություններ, կապված իրարամերժ տեսակետների հետ, որոնք առնչվում են մարմնի «ներկայացուցչականությունը» երաշխավորելու հետագա ընթացակարգին: Մուսուլմանների ժողովրդավարական միություն – ԲՄԺՄ/Association Democratique des Musulmans de Belgique – ADMB) կառույցը պահանջում է ընդհանուր և ժողովրդավարական ընտրություններ, ինչը նրանց կարծիքով կլինի միակ երաշխիքը խուսափելու համար Մարոկոյի և Թուրքիայի իշխանությունների միջամտությունից կազմակերպության աշխատանքներին:[1] Որոշակի պայքար կա կրոնական ուղղությունների ներկայացուցիչների քանակի շուրջ: Բացի իսլամական հավատքի պաշտոնական մարմին EMB-ից, տարբեր էթնիկ սոցիալ-մշակութային միությունները և դաշինքները կազմում են շատ դինամիկ մուսուլմանական քաղաքացիական հասարակություն.[2] Այս միավորումները հիմնականում կազմակերպվում են էթնիկ ծագման հիման վրա: Թուրքերի շրջանում կան մի շարք ֆեդերացիաներ, որոնք արտահայտում են մրցակցային գաղափարական և կրոնական հակումները Թուրքիայից: Մարոկկացիների քաղաքացիական հասարակությունն իր հերթին բաղկացած է մի շարք ֆեդերացիաներից և ասոցիացիաներից, որոնց թվում կան երիտասարդներին կամ իսլամի կրոնի ուսուցիչներին աջակցողներ: Ամենալավ կազմակերպված և, հետևաբար, ամենաազդեցիկ թուրքական իսլամական շարժումը Թուրքիայի Հանրապետության Կրոնական գործերի պետական մարմնի Բելգիայի մասնաճյուղն է (Belgika Turk Islam*

[1] 2012-ին այս երկու ուղղությունների միջև բախումները թեժացան այն բանից հետո, երբ 2012-ի հունվարին ADMB-ի հեռացված առաջատար դեմքերից մեկը 2012-ի մայիսին դատական հայց ներկայացրեց:

[2] Բելգիայի մուսուլմանական համայնքի տարբեր (իսլամիստական) ցանցերի, շարժումների և կազմակերպությունների վերաբերյալ տե՛ս Marechal, B., "Courant fondamentalistes en Belgique" (Fundamentalist tendences in Belgium), Middle East Review of International Affairs, vol., 3, no 1 (2008), Հասանելի է http://meria.idc.ac.il/journal_fr/2008/issue1/jv3n01a5.html էջում

Dlyanet Vakfi), որը հայտնի է որպես Դիյանեթ/Diyanet[1]: Դիյանեթը միավորում է Բելգիայում գտնվող թուրքական մզկիթների մոտ երկու երրորդին և ընդունում է իմամներին և իսլամական ուսուցիչներին, ովքեր վերապատրաստվել են Թուրքիայում և ֆինանսավորվում են Թուրքիայի կառավարության կողմից: Թուրքական երկրորդ իսլամական խումբը Milli Goriis (բառացի՝ «Ազգային տեսլական») կրոնական-քաղաքական շարժում է, որը ներկայացնում է Բելգիայի իսլամական ֆեդերացիան (Belgika islam Federasyonu).[2] Միլլի Գորիիսը կապեր է պահպանում ոչ թուրքական իսլամական խմբերի և եվրոպական տարբեր պետական մարմինների հետ, և Բելգիայում գտնվող թուրքական մզկիթների մոտ մեկ երրորդը պատկանում է այս խմբին: Կան մի շարք այլ թուրքական իսլամական համայնքներ, բայց դրանք զգալիորեն ավելի փոքր են: Երրորդ կարևոր խումբն է Իսլամական բարեփոխումների շարժումը, որը հայտնի է որպես Գյուլենի շարժում/Gulen Movement: Նրա տեսլականը կենտրոնանում է հավատացյալների տնտեսական և մտավոր վերնախավի ստեղծման վրա: Մի շարք հարակից կազմակերպություններ կազմակերպվում են FEDACTIO հարթակի միջոցով, որը վերախմբավորում է համայնքների վրա հիմնված տարբեր տեսակի կազմակերպություններ, որոնք աշխատում են զբաղվածության, կրթության, բարեկեցության և այլ հարցերի շուրջ[3]: Շարժումը վարում է նաև վեց հիմնական կամ միջնակարգ դպրոց (հոլանդերեն Lucerna քոլեջներ և ֆրանսալեզու Ecoles des Etoiles), գիշերօթիկ դպրոցներ և կրոնական ուսուցման կենտրոններ[4]: Գյուլենի շարժման վերջին կարևոր պլատֆորմը միջմշակութային երկխոսության պլատֆորմն է,[5] որի թիրախը հիմնականում մուսուլման և ոչ մուսուլման էլիտաներն են (հաճախ՝ կապված ԵՄ-ի և Բելգիայի հաստատությունների հետ) և որը կարևոր դեր է ունեցել 2011 թ.-ին Լյովենի համալսարանում Ֆեթուլլահ Գյուլենի միջմշակութային ուսումնասիրությունների ամբիոնի (GCIS) ստեղծման հարցում: Վերջին խումբը Ալեվիների միությունների Բելգիայի ֆեդերացիան է (Belgika Alevi Birlikleri Federasyonu), որն իրենից ներկայացնում է Բելգիայում թուրքական իսլամի հետերոդոքս շիական տարբերակը և ներկայացնում է հումանիստական մշակույթը[6]: Առանձին կրոնա-հասարակական և կրոնա-մշակութային կառույցներ ունեն նաև Բելգիայի մարոկկացիները, որոնք կապեր ունեն «Մուսուլման եղբայրներ»-ի հետ[7]: Ընդհանրապես Բելգիան աչքի է ընկնում մուսուլմանական կազմակերպությունների առատությամբ, գործում են մարզային և համապետական էթնիկ ընդհանրությամբ միություններ, մզկիթների իսլամական միություններ և այլն: Դրանք նախատեսում են իսլամական մշակութային նախաձեռնություններ և տեղերում համաժողովներ են կազմակերպում մուսուլմանական ինքնության և քաղաքացիության հարցերի վերաբերյալ: Գործում է նաև Բելգիայի իսլամական և մշակութային կենտրոնը (Centre Culturel et Islamique de Belgique (ICC)): 2002 թ. Նահանգային միությունները միավորվեցին՝ կազմավորելով Մզկիթների միությունների ֆեդերացիա (FUM): Այս ֆեդերացիաները

[1] www.diyanet.be/
[2] www.fibif.be/
[3] www.fedactio.be/
[4] www.lucemacollege.be/ և www.ecoledesetoiles.be
[5] www.dialogueplatform .eu www.babf.be /
[6] www.babf.be/
[7] **Marechal, B.,** The Muslim Brothers in Europe: Roots and Discourse (Leiden: Brill, 2008)

հանդես են գալիս որպես տեղական մզկիթների հիմնական ներկայացուցիչներ և տեղական իշխանությունների հետ հիմնական հաղորդակցվողներ: 2009-ին իսլամ դավանող բելգիացիները ստեղծեցին «Գմբեթ»/De Koepel բելգիական իսլամական կենտրոնը: Էթնոմշակութային ֆեդերացիաները կատարում են իսլամական ֆեդերացիաների նման գործառույթներ, սակայն ավելի շուտ կազմակերպված են ոչ թե որպես կրոնական, այլ՝ էթնոմշակութային հիմունքներով կազմակերպություններ: Կենտրոնը տրամադրում է կրոնական խորհուրդներ (ֆեթվա/fatwa), կրոնափոխությունը հաստատող վկայագրեր և կազմակերպում է արաբերենի և իսլամական աստվածաբանության դասընթացներ: Կազմակերպությունների վերջին խումբն են այն կազմակերպությունները, որոնք առավելապես կենտրոնացած են մուսուլման մասնագետներին միավորելու վրա: Դրանցից են ֆրանսախոս/ֆրանկոֆոն կողմում գտնվող Բելգիայում մուսուլման պրոֆեսիոնալների ասոցիացիան/Association Belge des Professionels Musulmans, ABPM) (www.abpm.be) և ֆլամանդական կողմում գտնվող Նիյան/Niya (www.niya.be):

Եզրակացություններ

Հետազոտության ընթացքում նկատեցինք, որ մեր ուսումնասիրման համար ընտրված երկրներում շատ նուրբ խնդիր է դրված. չտարանջատել մուսուլմաններին որպես մի առանձին խումբ և չհամարել նրանց կոլեկտիվ սուբյեկտ զուտ նրանց կրոնի պատճառով, որը հիմնական եվրոպական գաղափարախոսության կողմից ընկալվում է որպես բացասական կամ օտար ուղղություն: Նույնիսկ միտում կա՝ իսլամագիտությունը չհամարել որպես հետազոտությունների գիտական բնագավառ: Այս տեսակետն ունեն նրանք, ովքեր իսլամը փաստացիորեն դիտարկում են մարդկանց տարբեր լինելու բազմաթիվ գործոններից միայն մեկը:

*Վերջին քսան տարիների ընթացքում բազմաթիվ հետազոտություններ են անցկացվել Եվրոպայում մուսուլմանների վերաբերյալ, որոնք իրականացվել են իրավական, քաղաքական կամ անտրոպոլոգիական /մարդաբանական/ գործիքների օգնությամբ: Այդ հետազոտությունների մի մասն առնչվում է առանձին երկրների դեպքերի հետ, մյուսները փորձում են քննարկել կոնկրետ խնդիրներ, ինչպիսիք են՝ իսլամոֆոբիան, մուսուլմանների կրոնականությունը/կրոնասիրությունը, իսլամի օրենքը և կրթությունը կամ մուսուլման կանանց դիրքը եվրոպական համատեքստում: Տպավորությունն այն է, որ դեռևս **չկա եվրոպական երկրների բնակչության իսլամադավան հատվածի հետազոտության միասնական մեթոդաբանություն:** Եվրոպական ինստիտուցիոնալ, իրավական և քաղաքական իրողություններում պատմա-քաղաքական, միջառարկայական և համեմատական մոտեցումները միասնական չեն, տերմինաբանության առումով ուսումնասիրություններում կիրառվող թյուրըմբռնումները բավականին շատ են, որովհետև նույն հասկացության տակ Արևելքում մի բան են հասկանում, Արևմուտքում՝ այլ: Իհարկե, չափազանց բարդ է լիարժեք պատկերացնել «իսլամը» և «մուսուլմանները» Եվրոպայում, քանի որ եվրոպական իսլամը սփռված է տարբեր բնութագրեր ունեցող 46 երկրում: Որոշելու համար բնութագրիչները, որոնք կարող են սահմանել իսլամի ու Եվրոպայի միջև հարաբերակցությունը, որոշ հարցեր պետք է ստանան պատասխաններ: Մեր կարծիքով դրանց մեջ հատկապես կարևոր է ինչպե՞ս են պետությունները կառավարում կամ կարգավորում մուսուլման համայնքները, և ինչպե՞ս են վերջիններս հիմնում կազմակերպչական կառույցներ, ինպե՞ս են այդ համայնքները բարձրա-*

ձայնում իրենց իրավունքների պահանջները, ինչպե՞ս է նվիրվածությունը միաժամանակ իսլամին և պետությանն ազդում մուսուլման համայնքների դիրքի, իմիջի և սեփական ընկալման վրա: Այս հարցերը քննարկելու և այս հարցերին պատասխանելու համար Եվրոպայում մուսուլմանական համայնքների հետազոտության գործընթացը պահանջում է համեմատաբար և շարունակաբար դիտարկել պետական ինստիտուցիոնալ կազմակերպման ձևը, մուսուլմանական համայնքի կազմակերպումը, ղեկավարումը և անդամակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ / REFERENCES

1. **Marechal, B.,** "Courant fondamentalistes en Belgique" (Fundamentalist tendences in Belgium), Middle East Review of International Affairs, vol., 3, no 1 (2008), Հասանելի է http://meria.idc.ac.il/journal_fr/2008/issue1/jv3n01a5.html էջում
2. **Marechal, B.,** The Muslim Brothers in Europe: Roots and Discourse (Leiden: Brill, 2008)
3. **Phillips, Richard** "Standing together: the Muslim Association of Britain and the anti-war Movement", *Race & Class*, vol. 50, no. 2 (2008), pp. 101-113:
4. http://wahlen.itebo.de/komw2011/STOS_Kommunalwahl2011/404000_000017/
5. info@ditib.de, www.vikz.de, www.zentralrat.de, www.islamrat.de
6. www.babf.be/
7. www.centre-zahra.com.
8. www.dialogueplatform .eu www.babf.be /
9. www.diyanet.be/
10. www.fedactio.be/
11. www.fibif.be/
12. www.filsdefrance.fr.
13. www.lermf.com
14. www.lucemacollege.be/ և www.ecoledesetoiles.be /
15. www.mcb.org.uk
16. www.mosque-de-paris.org
17. www.uoif-online.com

РЕЗЮМЕ

Мусульманские организации стран западной Европы

Нуне Мелконян

Ассистент кафедры дипломатической службы и профессиональной коммуникаций, Факультет Международных отношений, Ереванский государственный университет

Ереван, Республика Армения

Ключевые слова: Западная Европа, мусульманские общины, ислам, институционализированные организации, религиозные объединения.

Перед современной политологией стоит задача изучения препятствий на пути

возможной интеграции мусульманских общин в Западной Европе и в этом контексте освещение деятельности их институционализированных организаций. Одним из основных инструментов роли мусульманских общин в государственной политике являются институционализированные организации, которые особенно важны с точки зрения политического участия. Во Франции религиозными делами занимаются влиятельные мусульманские федерации, в том числе Союз исламских организаций Франции. В Германии мусульманские организации действуют на государственном уровне. Есть большее количество местных организаций, которые созданы на основе государственного гражданского права. Наиболее влиятельными в Великобритании являются мусульманские национальные институты, под эгидой которых действуют многие мелкие и средние местные организации. Крупнейшая организация в 1997 г. Британский мусульманский совет (MCB), который имеет около 500 филиалов. 2005 г. Был основан Британский мусульманский форум, объединяющий особенно большое количество пакистанских суннитов, имеющий свои мечети и сети - специфические базы на севере Англии - в центральных частях. В Нидерландах мусульмане предпринимали многочисленные попытки создать единый представительный орган для всех мусульман. Большинство из них потерпели неудачу из-за внутренних религиозных разногласий между мусульманами-суннитами и шиитами-ахмадийцами, а власти отказались сотрудничать с отдельными ассоциациями этих групп, заявив, что они неадекватно представляют мусульманское население в целом. Бельгийский мусульманский национальный совет является главным представительным органом (EMB) с 1998 года. Идет определенная борьба за количество представителей религиозных конфессий. Помимо официального органа исламской веры, ИО, различные этнические социокультурные объединения и союзы образуют очень динамичное мусульманское гражданское общество.

SUMMARY

Muslim Organizations in Western Europe

Nune Melkonyan

Yerevan State University, Faculty of International Relations, Chair of diplomatic service and professional communications, Assistant

Yerevan, the Republic of Armenia

Key words: Western Europe, Muslim communities, Islam, institutionalized organizations, religious associations.

Modern political science is faced with the task of studying the obstacles to the possible integration of Muslim communities in Western Europe and, in this context, highlighting the activities of their institutionalized organizations. One of the main instruments of the role of Muslim communities in public policy are institutionalized organizations, which are especially important in terms of political participation. In France, religious affairs are handled by influential Muslim federations, including the Union of Islamic Organizations of France. In Germany, Muslim organizations operate at the state level. There are more local organizations that are based on state civil law. The most influential in the UK are Muslim national institutions, under the auspices of which many small and medium-sized local organizations operate. The largest organization in 1997 is the British Muslim Council (MCB), which has about 500 branches. 2005 The British Muslim

Forum was founded, bringing together a particularly large number of Pakistani Sunnis, having its own mosques and networks - specific bases in the north of England - in the central parts. In the Netherlands, both Muslims have made numerous attempts to create a single representative body for all Muslims. Most failed because of internal sectarian divisions between Sunni and Shia Ahmadiyya Muslims, and the authorities refused to cooperate with individual associations of these groups, saying they did not adequately represent the Muslim population as a whole. The Belgian Muslim National Council has been the main representative body (EMB) since 1998. There is a certain struggle for the number of representatives of religious denominations. In addition to the official body of the Islamic faith, the IO, various ethnic socio-cultural associations and unions form a very dynamic Muslim civil society.